

ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ԽԹԱՆՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴՐԱ ՏԵՂԱՅՆԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ* 1

ՀՏԴ 330.3

DOI: 10.52063/25792652-2022.1.12-222

ԱՏՈՍ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ինովացիոն և ինստիտուցիոնալ հետազոտությունների լաբորատորիայի ղեկավար, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն atom.margaryan@gmail.com

ԷՄԻԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ինովացիոն և ինստիտուցիոնալ հետազոտությունների լաբորատորիայի գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու, ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն emil.grigoryan.1995@gmail.com

Վերջին տասնամյակներին տնտեսագետների կողմից բազմիցս նշվել է նորարարության դրական ազդեցությունների մասին: Ազգային նորարարական համակարգի ձևավորման գործընթացում նորարարական գործունեությանը նպաստելու պետական ինստիտուցիոնալ լծակներից է նաև հարկային քաղաքականությունը: Հոդվածում նպատակ է սահմանվել ուսումնասիրել Հայաստանի, ԵՄ երկրների, Մեծ Բրիտանիայի հետազոտությունների և մշակումների հարկային խթանումը և նորարարությունը բնութագրող ցուցանիշները, մասնավորապես՝ R&D անուղղակի հարկային խթանների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում և նորարարական արդյունքի ենթահամաթիվը, իսկ խնդիրը տվյալ ցուցանիշների դինամիկայի, արդի միտումների, ինչպես նաև Հայաստանում նորարարական գործունեության հարկային խթանման ինստիտուցիոնալ հիմքերի ուսումնասիրությունն է: Հոդվածում կիրառվել են հետազոտության վերլուծության, համադրության, համեմատության, գրաֆիկական և նկարագրության մեթոդները: Դրված խնդրի համատեքստում դիտարկվել են 2000 և 2019 թթ. նորարարական գործունեության ուղղակի և անուղղակի խթանման և 2019 թ. նորարարական արդյունքի ցուցանիշները, որի հիման վրա կատարվել են որոշ եզրահանգումներ: Տարիների ընթացքում ավելացել է հարկային խթանների գործիքակազմն օգտագործող երկրների թիվը: Այլ հարց է՝ ինչպիսի կառուցվածք պետք է ունենա տվյալ գործիքակազմը՝ առավելագույն արդյունավետությունն ապահովելու նպատակով: Հայաստանում ներկայումս չի կիրառվում հետազոտությունների և մշակումների հարկային խթանման միջազգայնորեն ընդունված մեխանիզմ: Այնուհանդերձ, Հայաստանում նորարարական գործունեությանը մեծապես կարող է նպաստել ոլորտում հարկային քաղաքականության առաջավոր

* Հոդվածը ներկայացվել է 11.02.2022 թ., գրախոսվել՝ 15.03.2022 թ., տպագրության ընդունվել՝ 10.04.2022 թ.:

1 Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՍԸ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-5B313 ծածկագրով գիտական թեմայի շրջանակում:

փորձի ներդրումը հատկապես ազգային նորարարական քաղաքականության գործիքակազմի այլ բաղադրիչների հետ ներդաշնակ ներագդման պարագայում:

Հիմնաբառեր՝ ազգային նորարարական համակարգ, հետազոտություններ և մշակումներ, հարկային խթաններ, նորարարական արդյունք, պետական ֆինանսավորում, բարձրտեխնոլոգիական ոլորտ, գիտատեխնիկական գործունեություն:

Ներածություն

Գիտելիքի՝ որպես ներդրումների օբյեկտի յուրահատկությունները պետական մակարդակով լրացուցիչ հատկացումներ են ենթադրում (Dechezlepretre, et al. 1): Տարբեր երկրներում փորձ է արվում ստեղծելու նորարարական նպաստավոր միջավայր՝ նպատակ ունենալով խթանել կազմակերպությունների նորարարական գործունեությունը և հետևապես նպաստել կայուն տնտեսական աճին (Huang and Yang 1):

Ժամանակի ընթացքում ազգային նորարարական համակարգերում որոշակի մոտեցումներ են ձևավորվել հետազոտություններում և մշակումներում (R&D) ներդրումների հանդեպ, որոնցից է անուղղակի հարկային խթանների կիրառումը: Հարկ է նշել, որ տվյալ գործիքի կիրառման աշխարհագրությունը և ընդգրկման շրջանակները տարեցտարի ընդլայնվում են, ինչին նպաստող գործոններից են վարչական ծանրաբեռնվածության նվազեցումը և ռիսկային նախագծերում ներդրումներից դրամական միջոցների ինսայումը (Dechezlepretre, et al. 1):

Նշված համատեքստում կարևոր է դիտարկել հարկային մեխանիզմների ներդրման փորձը, դրսևորումները, միտումները և տեղայնացման հնարավորությունները, հատկապես այն պարագայում, երբ տարիներ շարունակ մասնագիտական տարբեր շրջանակներում և հարթակներում նշվել է Հայաստանում գիտատար մի շարք ոլորտներում կուտակված ներուժի և զարգացման հնարավորությունների մասին:

Գրականության ակնարկ

Ուսումնասիրվել է մեծ մասամբ արտասահմանյան գրականություն՝ փորձելու պարզել՝ որոնք են «R&D հարկային խթանում-նորարարական գործունեություն» փոխառնչությունների դիտարկման հիմնական ուղղությունները: «Նորարարություն» եզրի մեկնաբանությունն ու որպես արդյունք վերջինիս դիտարկումը տարբեր մասնագետների կողմից իրականացվել են սեփական հայեցողությամբ և տեսամեթոդական հիմնավորումներով: «Նորարարությունը նշանակալի դեր է խաղում ոլորտների և երկրների մրցակցային առավելությունների ձևավորման գործում» (d'Andria and Savin 1): Նորարարությունը բնութագրվում է նաև որպես «ժամանակակից տնտեսությունների աճի հիմնական աղբյուր» (Dechezlepretre, et al. 1):

Հարկային արտոնությունների կիրառման «առաջին քայլերը» կատարվել են Կանադայում 1962 թ., իսկ 1980-ական թթ. երկրում գործել է նաև հարկային վարկերի և հատուկ հետազոտական նպաստների համակարգ (Mansfield 190): Հետազոտություններում և մշակումներում ներդրումները նորարարության և տնտեսական աճի հիմնական գործոնն են: Դեռ նախորդ դարի 70-ական թթ. հետազոտությունների և մշակումների պետական ֆինանսավորման համատեքստում զարգացան հարկային խթանները՝ հարկային վարկերի տեսքով: Պետական լծակների ներուժը հատկապես արժեքավոր է, քանի որ մի շարք գործոններ (գիտելիքի արտահոսք, տոկոսադրույքի

մակարդակ, կազմակերպությունների չափեր, ոլորտային հատվածավորվածության աստիճան և այլն) պայմանավորում են նորարարական բնագավառներում ներդրումների իրականացման ռիսկայնության բարձր մակարդակը: Առավել պահպանողական համոզմունքներ ունեցող մասնագետները հենց այս հանգամանքն են վկայակոչում՝ նախապատվություն տալով հարկային խթանների կիրառմանը, այլ ոչ բյուջետային ուղղակի ֆինանսավորմանը: Հարկային խթանների կիրառումը, ըստ եւրոպյան, պետք է միտված լինի ոչ թե ներդրումների կառուցվածքային (ինչպես ուղղակի ֆինանսավորման դեպքում), այլ ծավալային փոփոխություններին (Tassey 605-606, 614): Դրանք, ի տարբերություն ուղղակի դրամաշնորհների, թույլ են տալիս մասնավոր կազմակերպություններին տնօրինել նորարարական նախագծերը և դրանց ծավալները: Միևնույն ժամանակ տվյալ նախագծերում գիտելիքի արտահոսքը կարող է լինել սպասվածից ավելին (Baghana and Mohnen 91):

Տեղեկատվության հասանելիությամբ պայմանավորված գիտելիքի արտահոսքից եկող խնդրից գատ՝ մասնավոր ներդրումների իրականացումը նպատակահարմար չէ մեկ այլ հանգամանքով: Մրցակցության բարձր մակարդակի պայմաններում նորարարության օգուտները կարճատև են: Ժ. Գուինետը և Հ. Կամատան, մասնավորապես, նշում են. «Փոխհատուցման մեխանիզմների բացակայության դեպքում գործարար ընկերությունները կարող են հակված լինել թերի ներդրումներ կատարելու հետազոտությունների և մշակումների ու նորարարության մեջ: Բայց չկա որևէ կախարդական բանաձև՝ որոշելու հետազոտությունների ու մշակումների «սոցիալապես ցանկալի» գումարը, և գործնականում կառավարությունները որոշում են՝ որքանով պետք է խթանեն հետազոտությունները և մշակումները՝ վերահսկելով ու գնահատելով բիզնես R&D-ի և հարակից կատարողականի միտումները: Տնտեսագիտության տեսությունը թողնում է բացը լրացնելու բազմաթիվ տարբերակներ» (Guinet and Kamata 22):

Ն. Բլումը, Ռ. Գրիֆիթը և Ջ. Վան Ռինենը ուսումնասիրել են 1979-1997 թթ. ՏՀԶԿ անդամ 9 երկրների տվյալները և պարզել, որ հարկային խթանները նպաստում են հետազոտությունների և մշակումների խտության աճին (1): Տնտեսագետները հարկաբյուջետային գործիքակազմի արդյունավետության հարցին թերահավատորեն են մոտենում. ենթադրվում է, որ R&D հարկային դրույքաչափերի առաձգականությունը ցածր է: Հեղինակները բարձրացրել են նաև մի քանի հիմնախնդիր: Առաջին՝ շատ դեպքերում երկրները ուշադրություն չեն դարձնում սուբսիդավորման վրա: Թվում է՝ նման քաղաքականության սահմանումը չի կարող նպաստել նորարարական գործունեության զարգացմանը: Այնուհանդերձ, հենց այս դեպքում է վառ արտահայտվում գիտելիքի արտահոսքի երևույթը, և շեշտը դրվում է նորարարությունների նմանական վրա: Հաջորդ հանգամանքն առնչվում է մրցակցության պայմաններում կառավարությունների կողմից հարկային խթանման մեխանիզմների ներդրման էկզոգեն բնույթին, այնինչ ներքին, ներպետական գործոնների դերը հաճախ շատ ավելի մեծ է լինում (Bloom, et al. 1, 20-22):

Հարկային խթանների՝ R&D ծավալների և գիտելիքի արտահոսքից դրական արդյունքների ներդաշնակեցման վրա ազդեցությունների ուսումնասիրությունն ենմիրիկ բնույթ ունի: «Եթե R&D հարկային խթանների ազդեցությունը ընկերության վարքագծի վրա փոքր է, ապա այդ խթանները կարող են պարզապես անսպասելի շահույթներ առաջացնել կորպորատիվ հատվածի համար» (Knoll, et al, 1):

Ժ. Գուինետը և Հ. Կամատան նշում են, որ մրցունակության վրա հարկային խթանների ազդեցությունն անհրաժեշտ է դիտարկել ընդհանուր հարկային համակարգի կամ քաղաքականության համատեքստում: Թեև արդյունքում շատանում են R&D ծախսերի իրականացման միտումները, դժվարությունները ծագում են հարկային համակարգի բաղադրիչների փոխառնչությունների ուսումնասիրության ընթացքում (Guinet and Kamata 25):

Աշխատություններից մեկում նշվում է. «Հետազոտողները հիմնականում կենտրոնացել են հետազոտությունների և մշակումների վրա հարկերի ազդեցությունների վրա, միևնույն քաղաքականության նպատակը նորարարությունը խթանելն է» (Dechezlepretre, et al. 1): Հեղինակների կարծիքով էքստենսիվ եղանակով հետազոտությունների և մշակումների իրականացումը, ինչպիսին է ցածրորակ նորարարական նախագծերի իրականացումը կամ գործունեության՝ որպես նորարարական գործունեության ներկայացումը, հետապնդում է մեկ նպատակ՝ օգտվել հարկային արտոնությունների համակարգից: Նրանք առաջ են քաշել հարկային խթանների՝ նորարարության վրա դրականորեն ազդելու հարցադրումը. հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ հարկային քաղաքականությունը դրականորեն է ազդում արտոնագրային գործունեության վրա թե՛ ուղղակի (մասնակից կազմակերպություններ), թե՛ անուղղակի եղանակով (որպես գիտելիքի արտահոսքի հետևանք): Այնուհանդերձ, որոշ դեպքերում նորարարության վրա ազդեցությունը բացասական է (կարճաժամկետ հատվածում միջոցներն ուղղվում են աշխատավարձի բարձրացմանը): Պարզ չէ՝ արդյոք հարկային արտոնությունները նորարարությունների խթանման պետական լծակներից ամենաարդյունավետն են, քանի որ ուղղակի ֆինանսավորման կարևորությունը նույնպես մատնանշվել է (Dechezlepretre, et al. 1, 28-29):

Պ. Գ. Կոռեան և Ի. Գուչերին ուշադրությունը հղել են հարկային քաղաքականության գործիքակազմի ընդլայնմանը և դրա արդյունքների քննարկմանը ոչ միայն նորարարական մուտքերի (R&D ծախսեր), այլ նաև նորարարական արդյունքի (արտոնագրային գործունեություն, նորարարությունների առևտրայնացում) տեսանկյունից: Չարգացած երկրներում հարկային քաղաքականության արդյունավետության գնահատումը ժամանակին վկայել է հարկային արտոնություններ-նորարարական արդյունք դրական կապերի մասին: Ներկայումս անհրաժեշտություն է զգացվում գնահատելիք երկրների ընդլայնման ու գնահատման մշտական մշտադիտարկման, ինչը թույլ կտա բարելավել հարկային լծակների առանձին տարրերը (13-14):

Մի շարք տնտեսագետներ նշում են, որ հարկային խթանների ազդեցությունը բոլոր կազմակերպությունների նորարարական գործունեության վրա սահմանափակ է, միևնույն դրական են ազդեցությունները շրջանառության ծավալների, աշխատանքի արտադրողականության աճի և շուկայում նոր ապրանքների ու ծառայությունների ի հայտ գալու վրա. զբաղվածության, վաճառքի ծավալների և այլ ցուցանիշների վրա ազդեցության գնահատումը ենթակա է հետագա խորքային ուսումնասիրության: Ազգային նորարարական համակարգի հարկային մեխանիզմների բարելավումը շահադրվում է նորաստեղծ նորարարական կազմակերպությունների ապահոված տեխնոլոգիական նորարարությամբ, ինչպես նաև սոցիալ-տնտեսական օգուտներով: Դիտարկվել է արդյունքը մի քանի տեսանկյունից՝ զբաղվածություն, նորարարություններ և գործունեության արդյունքներ (Mitchell, et. al 121, 128-129):

Կանադայում 1999 թ. հարկային վարկերի սվայների հիման վրա արված հետազոտությունում շեշտը դրվել է հատկապես նորարարական արդյունքի, այլ ոչ R&D ծախսերի վրա: Արդյունքները ցույց են տվել, որ առկա են դրական ազդեցություններ կազմակերպությունների ապրանքային նորարարության վրա, իսկ նորարարական ծառայությունների և արտադրանքի շնորհիվ կազմակերպությունները բարեհաջող դիրքավորվում են նաև արտաքին շուկաներում: Այնուհանդերձ, հեղինակները նշում են, որ դրական ազդեցությունները դիտարկվում են երկարաժամկետ կամ միջնաժամկետ հատվածում: Բացի այդ՝ կարող են լինել ոլորտների կտրվածքով նորարարություն-կատարողական կապերի հնարավոր էական տարբերություններ (Czarnitzki, et. al 21): Նորվեգիայում նմանօրինակ հետազոտությունները վկայել են հարկային վարկերի դրական ազդեցության մասին տեխնոլոգիական, այլ ոչ ապրանքային (այդ թվում՝ արտոնագրերի թիվ) նորարարության վրա (Cappelen, et. al 29): Չ. Հունանը և Չ. Յանն ընդգծում են, որ

հարկային վարկերը թեթևացնում են մասնավոր հատվածի «ծախսային բեռը» և թույլ են տալիս հետազոտություններն ու մշակումները զարգացնել սեփական պատկերացումներով ու առաջնահերթություններով (Huang and Yang 1, 5-6): Նորարարական գործունեության հարկային կարգավորման բնագավառի աշխատությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս դիտարկել «հարկային համակարգ-նորարարական արդյունք» կապերն ու փոխառնչությունները:

Մեթոդաբանություն

Սույն հետազոտության խնդիրների համատեքստում ուսումնասիրվել են թեմային առնչվող մասնագիտական գրականությունը, տարբեր հրապարակումներ, ինչպես նաև ՏՀԶԿ (Organization for Economic Co-operation and Development) և Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (Cornell University, INSEAD, and WIPO) տվյալների շտեմարանները: Պետական քաղաքականության շրջանակներում նորարարական գործունեության ուղղակի և անուղղակի խթանումը բնութագրվել է խթանման առանձին տեսակների՝ ՀՆԱ-ում տեսակարար կշռի ցուցանիշով: Ընդ որում, դիտարկվող ժամանակահատվածն ընդգրկում է 2000-2019 թվականները, ուսումնասիրվել է ցուցանիշների դինամիկան: Հարկ է նշել, որ պետական աջակցությանն առնչվող ոչ բոլոր ցուցանիշներն են հասանելի եղել թե՛ 2000 թ., թե՛ 2019 թ.: Ցուցանիշների դինամիկան վիզուալ ներկայացնելու համար նպատակահարմար ենք համարել գծապատկերների միջոցով միայն այն երկրների տվյալների ներկայացումը, որոնցում առկա են 2 տարիների ցուցանիշները: Նորարարական գործունեությունը բնութագրվել է 2019 թ. նորարարական արդյունքի ենթահամաթվով:

Հայաստանում հետազոտությունների և մշակումների ֆինանսավորման վերաբերյալ տվյալները վերցվել են ՀՀ վիճակագրական կոմիտեից, ՏՏ ոլորտը նկարագրվել է «Տեղեկատվական տեխնոլոգիաների պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության տվյալներով:

Վերլուծություն


Ամբողջ աշխարհում կառավարություններն ընդունում են ֆինանսական աջակցության տարբեր գործիքներ՝ խթանելու կազմակերպությունների կողմից հետազոտությունների ու մշակումների իրականացումը և հետզհետե առավելապես ապավինում են հարկային արտոնություններին՝ խթանելու բիզնեսում հետազոտությունների ու մշակումների ներդրումները»: 2021 թ. ԵՄ 27 երկրներից 22-ում կիրառվում են հարկային արտոնություններ կառավարական տարբեր մակարդակներում: 2020 թ. Գերմանիայում առաջին անգամ են սկսել կիրառվել արտոնությունները: Հատկանշական է, որ դարասկզբին ԵՄ երկրներից միայն 11-ում են կիրառվել հարկային արտոնությունների գործիքներ, այսինքն՝ արտոնությունների փաթեթները կիրառող ԵՄ երկրների թիվը կրկնապատկվել է (Organization for Economic Co-operation and Development 4, 6):

Հարկային խթանման անուղղակի ձևերը միտված են առավելապես արտահանման ծավալների ավելացմանը: Ընդհանուր առմամբ, հարկային խթանների հիմնական ձևերն են հարկային արձակուրդները, հարկերից ազատումը, նվազեցված հարկային դրույքաչափերը, հարկային վարկը և այլն (Manoogian and Shakhmuradyan 6): Հարկային վարկի դեպքում, ի տարբերություն նախորդ ձևերի, գումարի չափը հաշվարկվում է վերջնական հարկային պարտավորության մասով: Շատ երկրներում նկատվող միտումներից է խառը կամ հիբրիդային հարկային մեխանիզմներից

անցումը պարզին, ինչպեսՖրանսիայում և Իռլանդիայում: (Organization for Economic Co-operation and Development 8, 11):

Հատկապես միջազգային առաջավոր փորձի կիրառմամբ հետազոտությունների և մշակումների քանակական ու որակական աճին ուղղված հարկային արտոնությունները առնչվում են հայեցակարգային տարբեր խնդիրներին: 2019 թ. արտոնությունների համակցված՝ ուղղակի և անուղղակի, այսինքն՝ հարկային արտոնությունների միջոցով հետազոտությունների ու մշակումների իրականացման խթանման մակարդակը ՀՆԱ-ում մասնաբաժնի տեսանկյունից հատկապես բարձր է Միացյալ Թագավորությունում, Ֆրանսիայում և Բելգիայում, որոնց հաջորդում են Պորտուգալիան ու Ավստրիան: Հետազոտությունների ու մշակումների գծով հարկային արտոնությունների խթանման ուսումնասիրությունը թույլ է տալիս առավել ամբողջական պատկերացում կազմել նորարարական գործունեության զարգացման պետական քաղաքականության վերաբերյալ: ԵՄ անդամ շատ երկրներում հետազոտությունների ու մշակումների խթանումն իրականացվում է ոչ թե ուղղակի, այլ անուղղակի բաղադրիչով (Ավստրիա, Բելգիա, Ֆրանսիա, Իռլանդիա, Իտալիա, Պորտուգալիա) (Organization for Economic Co-operation and Development 21-22):

Գծապատկեր 1-ում ներկայացված տվյալներից նկատելի է, որ 2019 թ. հարկային արտոնությունների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում Մեծ Բրիտանիայում, Ֆրանսիայում ու Բելգիայում կազմել է համախառնախանաբար 0.33, 0.28 և 0.2 %, իսկ 2000 թ.՝ համապատասխանաբար 0.01, 0.04 և 0 %:




Գծապատկեր 1. R&D հարկային խթանների միջոցով կառավարության անուղղակի աջակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ 2000 և 2019 թթ., %¹

2019 թ. ԵՄ երկրներում հետազոտությունների և մշակումների ուղղակի ֆինանսավորումը կազմել է ՀՆԱ մոտ 0.007 %-ը և բիզնես R&D-ի 5 %-ը: 2019 թ. ԵՄ անդամ երկրներում հարկային խթանները կազմել են բիզնես R&D-ի 7.1 %-ը: Նույն տարում ԵՄ երկրներում անուղղակի կամ հարկային խթանները միջինում կազմել են ՀՆԱ-ի 0.1 %-ը (ներառյալ նաև այն երկրները, որոնցում չի իրականացվում անուղղակի հարկային խթանում), իսկ ՏՀԶԿ երկրներում՝ 0.12 %-ը: 2000 թ. տվյալ ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 0.02 և 0.04 %: Ընդհանուր առմամբ, ֆինանսական բաղադրիչում հարկային խթանների հարաբերական կարևորությունը 2019 թ. բարձր է եղել հատկապես Իռլանդիայում (44 %), Մեծ Բրիտանիայում (38 %), Պորտուգալիայում (37 %), Ֆրանսիայում (31%), Իտալիայում

¹ Աղբյուրը. կազմվել է հեղինակների կողմից ՏՀԶԿ տվյալների հիման վրա (<https://stats.oecd.org/Index.aspx?DataSetCode=RDTAX>):

(23 %), և Բելգիայում (23 %): Տվյալ երկրներում հարկային քաղաքականությունը կազմում է նորարարական քաղաքականության կարևորագույն տարրերից մեկը (Organization for Economic Co-operation and Development 22, 24):

Երկրներից մի քանիսում հարկային խթանները կիրառվում են ինչպես ազգային, այնպես էլ ենթազգային մակարդակում (Հունգարիա, Իսպանիա): Իհարկե, հարկային քաղաքականությունում կիրառվող գործիքակազմը թույլ է տալիս ավելի լայն և ամբողջական պատկերացում կազմել նորարարական գործունեության պետական աջակցության մասին, որը շատ դեպքերում ուղղակի ֆինանսավորման կամ խթանման այլընտրանքային տարբերակ է: Նման վիճակն ակներև է Ավստրիայի, Բելգիայի, Ֆրանսիայի, Իռլանդիայի, Իտալիայի, Պորտուգալիայի ու Միացյալ Թագավորության օրինակով (Organization for Economic Co-operation and Development 22):




Գծապատկեր 2. Բիզնես R&D ուղղակի կառավարական ֆինանսավորումը ՀՆԱ-ի նկատմամբ 2000 և 2019 թթ., %¹

Գծապատկեր 2-ում ներկայացված տվյալներից նկատելի է, որ BERD պետական ֆինանսավորման ամենաբարձր մակարդակը 2019 թ. գրանցվել է Հունգարիայում (0.18 %), որին հաջորդում են Սլովենիան (0.116 %) և Ֆրանսիան (0.106 %): Պետական ուղղակի աջակցության ամենացածր մակարդակն արձանագրվել է մերձբալթյան երկրներում՝ Լատվիայում (0.006%) և Լիտվայում (0.006 %): 2000 թ. ցուցանիշի գծով առաջատարներն են եղել Գերմանիան (0.116 %) և Ֆրանսիան (0.13 %), իսկ Լիտվայում կրկին գրանցվել է ամենացածր ցուցանիշը (0.001 %): Դիտարկվող ժամանակաշրջանում պետական ուղղակի ֆինանսավորման ծավալներն ամենաշատն ավելացել են Հունգարիայում, Լիտվայում, Պորտուգալիայում և Էստոնիայում, համապատասխանաբար 7.5, 4.5, 4 և 2.8 անգամ, իսկ որոշ երկրներում այն անգամ նվազել է (մասնավորապես, Լատվիայում, Սլովակիայում, Ֆինլանդիայում, համապատասխանաբար 40, 82.2 և 41.6 %-ով)²: ԵՄ (ՏՀԶԿ) միջին ցուցանիշը 2000 և 2019 թթ. կազմել է համապատասխանաբար 0.08 (0.1) % և 0.07 (0.09) %, և արձանագրվել է անկում:


¹ Աղբյուրը. կազմվել է հեղինակների կողմից ՏՀԶԿ տվյալների հիման վրա (<https://stats.oecd.org/Index.aspx?DataSetCode=RDTAX>):

² Հեղինակների հաշվարկներ՝ հիմնված ՏՀԶԿ տվյալների վրա (<https://stats.oecd.org/Index.aspx?DataSetCode=RDTAX>):



Գծապատկեր 3. Ուղղակի և անուղղակի (հարկային) խթանները ՀՆԱ-ի նկատմամբ 2000 և 2019 թթ., %¹

Ուղղակի և հարկային խթանների հանրագումարի տեսակարար կշռի դինամիկան ներկայացված է գծապատկեր 3-ում: Տվյալները ցույց են տալիս, որ 2019 թ. պետական աջակցության ամենաբարձր մակարդակը դիտարկվող երկրներից Մեծ Բրիտանիայում ու Ֆրանսիայում է (համապատասխանաբար 0.42 և 0.39 %), ամենացածրը՝ Լատվիայում ու Լիտվայում (համապատասխանաբար 0.006 և 0.03 %): 2000 թ. պետական աջակցության միջին մակարդակը ԵՄ երկրներում ավելի ցածր է եղել, իսկ առաջատարը եղել է Ֆրանսիան (0.16 %): 2000-2019 թթ. հետազոտությունների և մշակումների զարգացման պետական աջակցության տեսակարար կշիռն աճել է ավելի քան 3 անգամ Մեծ Բրիտանիայում, Սլովենիայում ու Պորտուգալիայում:




Գծապատկեր 4. R&D կառավարության բյուջեները և հարկային խթանները ՀՆԱ-ի նկատմամբ, %²

¹ Աղբյուրը. կազմվել է հեղինակների կողմից ՏՀԶԿ տվյալների հիման վրա (<https://stats.oecd.org/Index.aspx?DataSetCode=RDTAX>):

² Աղբյուրը. կազմվել է հեղինակների կողմից ՏՀԶԿ տվյալների հիման վրա (<https://stats.oecd.org/Index.aspx?DataSetCode=RDTAX>):

ՀՆԱ կառուցվածքում նորարարական գործունեությանն ուղղված բյուջետային հատկացումների և հարկային խթանների վերաբերյալ տվյալները ներկայացված են գծապատկեր 4-ում, որի տվյալներից նկատելի է հատկապես արևմտաեվրոպական երկրների ՀՆԱ կառուցվածքում բյուջետային հատկացումների մեծ կշիռը: 2019 թ. այն բարձր է եղել հատկապես գերմանալեզու երկրներում՝ Գերմանիայում և Ավստրիայում (համապատասխանաբար 0.98 և 0.95 %): Ամենացածր ցուցանիշը գրանցվել է Լատվիայում (0.23 %), իսկ 2000 թ.՝ Լյուքսեմբուրգում (0.10 %): 2000 թ. նորարարական գործունեության աջակցության ամենաբարձր մակարդակը եղել է Ֆրանսիայում (0.97 %)։ Ուսումնասիրվող 20-ամյա ժամկետում պետական աջակցության ծավալների կշիռն ամենամեծ չափով աճել է Լյուքսեմբուրգում (528 %), Էստոնիայում (88.6 %) և Բելգիայում (62.8 %), իսկ նվազել՝ երկրներից միայն 3-ում՝ Ֆինլանդիայում, Ֆրանսիայում և Պորտուգալիայում (համապատասխանաբար 11.9, 6.2 և 2.8 %-ով):

Գլոբալ նորարարական համաթվի նորարարական արդյունքի ենթահամաթվի վերաբերյալ տվյալներն ամփոփ ներկայացված են գծապատկեր 5-ում:



Գծապատկեր 5. Նորարարական արդյունքի ենթահամաթվի վճարում և Միացյալ Թագավորությունում 2019 թ.¹

Գծապատկեր 5-ում ներկայացված տվյալներից նկատելի է, որ 2019 թ. նորարարական արդյունքի առումով բարձր արդյունքներ գրանցած երկրներն են Նիդերլանդները (57.5), Շվեդիան (56.9) և Մեծ Բրիտանիան (54.4), իսկ ամենացածր մակարդակն արձանագրվել է Դոմաստանում (27.6): Հետաքրքրական է, որ ենթահամաթվի ԵՄ միջին ցուցանիշը կազմում է մոտ 41.6: Նորարարական արդյունքի բարձր մակարդակ ունեցող երկրներից Ֆինլանդիայում, Գերմանիայում և Լյուքսեմբուրգում առիասարակ չի կիրառվում անուղղակի հարկային խթանների համակարգը, մինչդեռ Մեծ Բրիտանիայում երկու ցուցանիշներն էլ բարձր են նշված:

¹ Աղբյուրը. կազմվել է հեղինակների կողմից Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության տվյալների հիման վրա (The Global Innovation Index 2019: Creating Healthy Lives-The Future of Medical Innovation, Ithaca, Fontainebleau, and Geneva. 2019, pp. 218-346):

Նորարարությունների խթանման միջազգային փորձի հայաստանյան անդրադարձները

2019 թ. Գլոբալ նորարարական համաթվում նորարարական արդյունքի հայաստանյան ենթահամաթիվը կազմել է 28.6. 128 երկրների շարքում Հայաստանը զբաղեցրել է 50-րդ հորիզոնականը (Cornell University, INSEAD, and WIPO 221): Կարելի է ասել, որ Հայաստանի Հանրապետությունը, որը ավանդաբար համարվում է տեխնոգեներատոր, այսինքն՝ բարձրակարգ տեխնոլոգիաների ստեղծմանն ու փոխանցմանը ունակ երկիր, այդ բնագավառի խթանման միջազգայնորեն հայտնի գործիքակազմերի որոշ տարրերի օգտագործման որոշակի պաշար է կուտակել: Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են հետազոտությունների և մշակումների խթանման ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի մեխանիզմները: Ընդ որում, ուղղակի խթանման գործիքակազմերի առումով հատկացվող միջոցների գումարը դիսամիկորեն աճում է: Եթե 2000 թ. պետական բյուջեից գիտության ոլորտին հատկացված միջոցները կազմել են ՀՆԱ 0.1 %-ը, ապա՝ 2019 թ., տվյալ ցուցանիշը կազմել է 0.18 %: Ընդ որում, պետության մասնաբաժինը R&D ներքին ծախսերի մեջ նույն տարում կազմել է 73.4 % (2000 թ.՝ 77.1 %), իսկ սեփական միջոցներով R&D ծախսերի մասնաբաժինը՝ ընդամենը 0.4 %:

Ուղղակի խթանման կամ ֆինանսավորման շրջանակներում առաջնահերթություններից է թե՛ բացարձակ, թե՛ հարաբերական տեսանկյունից հիմնարար հետազոտությունների ու մշակումների ֆինանսավորման ավելացումը: Այդուհանդերձ, միջազգային փորձագետների կարծիքով «Հայաստանի գիտական կատարողականը մեկ շնչի հաշվով ներկա մակարդակի պայմաններում կայուն չէ» (Եվրոպական հանձնաժողով, 12): Հայաստանի բարձրտեխնոլոգիական ոլորտներում, ի տարբերություն եվրոպական շատ երկրներում լայն կիրառություն ունեցող հարկային խթանների առաջավոր ձևերի, կիրառվում են միայն հարկային արձակուրդներն ու արագացված մաշվածության սկզբունքը (Manoogian and Shakhmuradyan 61):

Միևնույն ժամանակ օրինակելի է մասնավորապես տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում պետական աջակցության շրջանակներում 2014 թվականից ի վեր հարկային արտոնությունների կիրառումը, ըստ որի՝ որոշակի պայմանների բավարարող կազմակերպությունների համար սահմանված են հարկային արտոնություններ (եկամտահարկի 10 % և շահութահարկի 0 % դրույքաչափեր) (ՀՀ Ազգային ժողով): Եթե 2015 թ. վերջի դրությամբ արտոնություններից օգտվում էին մոտ 60 ՏՏ կազմակերպություններ, ապա 2021 թ. վերջիններին թիվն անցել է 1100-ից (ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն): Թերևս հարկային արտոնությունների կիրառման հանգամանքն է հիմնական պատճառը, որ ՀՀ ՏՀՏ ընկերությունների քանակն ու նրանց շրջանառությունները վերջին տարիներին կտրուկ աճել են: Պետք է նկատել, որ տեղի է ունեցել նաև ՏՀՏ ոլորտի արտադրանքի արտահանման ծավալների կտրուկ աճ: Բայց միևնույն ժամանակ պետք է հաշվի առնել, որ երկրի ընդհանուր արտահանման մեջ բարձրտեխնոլոգիական արտադրանքի մասնաբաժինը մնում է չափազանց համեստ: Այս հանգամանքով պայմանավորված՝ ՀՀ դիրքավորումը գլոբալ արժեշոթաններում առայժմ գտնվում է խիստ ցածր մակարդակի վրա:

Միևնույն ժամանակ պետք է նկատել, որ բարձրտեխնոլոգիական ոլորտի պետական կարգավորման ու խթանման միջազգային հարուստ փորձի բազմաթիվ արդյունավետ տարրեր դեռևս պատշաճ մակարդակով չեն կիրառվում Հայաստանի Հանրապետությունում: Դա վերաբերում է ինչպես իրավաօրենսդրական կարգավորումներին, այնպես էլ քաղաքականության գործիքակազմերին: Այդպիսի խնդիրներից մեկը վերաբերում է ներդրումային օրենսդրությանը: Այսպես, օրինակ, ավելի քան 25 տարի առաջ ընդունված «Օտարերկրյա ներդրումներ մասին» ՀՀ

օրենքը, չնայած որոշակի բարելավումներին, անհուսորեն հնացել է: Այն, ըստ էության, չի խրախուսում ինչպես օտարերկրյա, այնպես էլ տեղական ներդրումները ՀՀ-ում: Հատկապես օրենսդրական առումով խնդրահարույց է մտնում ներդրումների հարցում ծագած վեճերի կարգավորումների ինստիտուցիոնալ և ընթացակարգային խոցելիությունը: Թերևս, այլ պատճառների հետ մեկտեղ, այդօրինակ խոչընդոտներն են պատճառը, որ հայաստանյան շատ բարձրտեխնոլոգիական ընկերություններ գերադասում են գրանցվել արտասահմանում, սակայն լրիվ կամ մասնակի գործունեություն ծավալել նաև Հայաստանում:

Հարկաբյուջետային քաղաքականությունը կարող է իր ուրույն դերն ունենալ հետազոտություններում և մշակումներում ներդրումների աճի վրա (Manoogian and Shakhmuradyan 4): Հարկ է նշել, որ ՀՀ ՏՏ ոլորտի աջակցության շրջանակներում եկամտահարկի դրույքաչափի նվազեցումից օգտվում են առավելապես վարձու աշխատողները, ոչ թե գործատուն: Բացի այդ՝ տվյալ արտոնությունը տարածվում է բացառապես ՏՏ ոլորտի կազմակերպությունների վրա, մինչդեռ նորարարական գործունեություն ծավալող գիտահետազոտական կազմակերպությունների և ուսումնական հաստատությունների համար նման խթանող միջոցառումներ չեն կիրառվում: Հարկային վարկերի գործիքի միջոցով կշահեն նաև վարձու աշխատողները, քանի որ տվյալ ոլորտի ծախսերի մեծ մասն ուղղվում է հենց մասնագետների վարձատրությանը (Kalantaryan H. 2020): Վ. Բոստանջյանը և Ա. Չախարյանն առաջարկել են ներդնել արտոնյալ պայմաններով հարկային մեխանիզմ նորարարական գործունեությանն առնչվող կազմակերպությունների, համալսարանների և ինստիտուտների համար (Բոստանջյան և Չախարյան 85): Ս. Մանուկյանը և Գ. Շահմուրադյանը որպես բարելավման ուղի առաջարկել են հարկային վարկերի, R&D ծախսերի կրճատման ու զբաղվածության սուբսիդավորման մեխանիզմների ներդրումը (Manoogian and Shakhmuradyan 64-65):

Բարձրտեխնոլոգիական ոլորտի խթանման վերաբերյալ մեր կողմից դիտարկված երկրների փորձը հուշում է, որ այդ բնագավառում սրընթաց ճեղքում ապահովելու համար հարկավոր է ունենալ մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության միջազգանորեն մրցունակ և համադրելի օրենսդրություն, ինչպես նաև ինստիտուցիոնալ կարգավորման արդյունավետ մեխանիզմներ: Սակայն հայաստանյան այդ բնագավառները շարունակում են մնալ անկատար վիճակում: Դա, ի դեպ, վերաբերում է նաև բարձրտեխնոլոգիական ոլորտներին առնչվող հիմնադրամների և բաժնետիրական ընկերությունների գործունեության կարգավորումներին:

Եզրակացություններ

Հետազոտությունների և մշակումների հարկային խթանման կամ արտոնությունների համակարգի՝ նորարարական գործունեության վրա դրական ազդեցությունների մասին են վկայում բազմաթիվ աշխատություններ: Կարևորագույն հարցերից է, թե ինչ տեսանկյունից է ուսումնասիրությունն իրականացվում, և տնտեսագետների կողմից ինչն է համարվում թիրախ՝ հետազոտությունների ու մշակումների ծավալը (կամ R&D ծախսերը), թե՞ հենց նորարարությունը: Նորարարությունը կարելի է բնութագրել տարատեսակ ցուցանիշներով՝ արտոնագրային գործունեությունից և նորույթների առևտրայնացումից մինչև աշխատանքի արտադրողականություն: Բազմաթիվ մասնագետների կողմից առավել նպատակահարմար և տրամաբանական է ընդունվում հատկապես նորարարությունների վրա հարկային արտոնությունների համակարգի ազդեցության գնահատումը:

Դիտարկվող քսանամյա ժամանակահատվածում նվազել է հետազոտությունների և մշակումների պետական ուղղակի ֆինանսավորման կշիռը

ՀԱՂ-ում: Մինևույն ժամանակ ավելացել է խթանման անուղղակի բաղադրիչի կշիռը: Այնուհանդերձ, բարձրտեխնոլոգիական և գիտելիքահենք ոլորտների խթանման գործիքակազմի անուղղակի բաղադրիչը՝ հարկային խթանների համակարգը, դեռևս շարունակում է կազմել պետական աջակցության փոքր մասը: Ընդհանուր միտումների համատեքստում, որոնք են տեխնոլոգիաների դինամիկ զարգացումը, գաղափարների ու նորույթների գեներացումը, բարձրտեխնոլոգիական ոլորտների զարգացումը և վերջապես անցումը չորրորդ արդյունաբերական հեղափոխությանը, կարելի է ենթադրել ապագայում նորարարական գործունեությանն ուղղված պետական ակտիվ քաղաքականության (այդ թվում՝ հարկային) իրականացման մասին:

Հարկային արտոնությունների համակարգ ներդրած երկրների թվի աճի պայմաններում տնտեսագետներն ընդգծում են վիճակագրության իրականացման, տվյալների հասանելիության, մշտական մշտադիտարկման և հատկապես արդյունքների գնահատման մասին, քանի որ քաղաքականության վերջնական նպատակն է վերջո հետազոտությունների և մշակումների միջոցով նորարարությանը և տնտեսական աճին նպաստելն է:

Նորարարական գործունեության հարկային խթանման քաղաքականության առաջավոր փորձի տեղայնացումը, հարկային գործիքակազմի մշակումն ու ներդրումը Հայաստանին կարող են ապահովել հետազոտությունների և մշակումների բնագավառներում նկատելի հաջողություններով: Այնուհանդերձ, չնայած վերջին տարիներին ներկայացված բարելավման ուղղություններին և գործնական առաջարկություններին՝ նախնական գնահատումների արդյունքում պետք է պարզել՝ որքանով արդարացված կլինեն կիրառվելիք հարկային խթանները սոցիալ-տնտեսական տեսանկյունից, վերջին հաշվով հարկային խթանների կիրառման պարագայում նվազում են հարկային եկամուտները:

Օգտագործված գրականություն

1. Cornell University, INSEAD and WIPO. *The Global Innovation Index 2019: Creating Healthy Lives-The Future of Medical Innovation*. Ithaca, Fontainebleau, and Geneva, 2019, <https://www.globalinnovationindex.org/userfiles/file/reportpdf/gii-full-report-2019.pdf>.
2. ՀՀ Ազգային ժողով. «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենք. 17 դեկտ. 2014, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=95017>:
3. ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն. «SS ոլորտում պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով սահմանված արտոնությունից օգտվող կազմակերպությունների ցանկ (2015-2021թթ.). 2022, https://hti.am/main.php?lang=1&page_id=718:
4. Եվրոպական հանձնաժողով. *Հատուկ օժանդակություն Հայաստանին. «Նշածողի բարձրացում. գիտության նոր առաքելությունը Հայաստանի զարգացման մեջ»*. 2020, http://publications.europa.eu/resource/cellar/391373a3-35de-11eb-b27b-01aa75ed71a1.0002.01/DOC_1:
5. Բոստանջյան, Վարդան, և Արմինե Չախարյան. Ինովացիոն գործունեության խթանման հիմնասխեմները Հայաստանի Հանրապետությունում. «Բանբեր» ՀՊՏՀ, No. 3, 2019, էջ 71-91, <https://asue.am/upload/files/science/banber/2019-year-3/6.pdf>:
6. Baghana, Rufin, and Pierre Mohnen. "Effectiveness of R&D tax incentives in small and large enterprises in Quebec". *Small Business Economics*, No. 33.1, 2009, pp. 91-107, <https://link.springer.com/article/10.1007/s11187-009-9180-z>.
7. Bloom, Nick, et al. "Do R&D tax credits work? Evidence from a panel of countries 1979-1997". *Journal of Public Economics*, No. 85.1, 2002, pp. 1-31, <https://nbloom.people.stanford.edu/sites/g/files/sbiybj4746/f/rdtaxcredits.pdf>.

8. Cappelen, Adne, et al. "The effects of R&D tax credits on patenting and innovations". *Statistics Norway, Research Department*, 2008. 1-30, <https://www.econstor.eu/bitstream/10419/192547/1/dp565.pdf>.
9. Correa, Paulo, and Irem Guceri. "Tax incentives for research and development." *Innovation, Technology and Entrepreneurship Policy Note*, No. 4. World Bank, 2013. pp. 1-18, <https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/23659/91851.pdf?sequence=2&isAllowed=y>.
10. Czarnitzki, Dirk, et al. "Evaluating the impact of R&D tax credits on innovation: A microeconomic study on Canadian firms." 2004, pp. 1-23, <https://www.econstor.eu/bitstream/10419/24085/1/dp0477.pdf>.
11. d'Andria, Diego, and Ivan Savin. "Motivating innovation in a knowledge economy with tax incentives". *Jena Economic Research Papers*, No. 2015-004, Friedrich Schiller University Jena, 2015, pp. 1-34, <https://www.econstor.eu/bitstream/10419/108550/1/819017949.pdf>.
12. Dechezlepretre, Antoine, et al. "Do tax incentives for research increase firm innovation? An RD design for R&D". *National Bureau of Economic Research*, No. w22405, 2016, pp. 1-40, https://www.nber.org/system/files/working_papers/w22405/w22405.pdf.
13. Guinet, Jean, and Hiroko Kamata. "Do tax-incentives promote innovation?". *OECD Observer*, No. 202, 1996, pp. 22-26, https://www.oecd-ilibrary.org/economics/oecd-observer/volume-1996/issue-5_observer-v1996-5-en.
14. Huang, Chia-Hui, and Chih-Hai Yang. "Tax Incentives and R&D Activity: Firm-Level Evidence from Taiwan". 2009, pp. 1-40, https://gcoe.ier.hit-u.ac.jp/CAED/papers/id209_Huang_Yang.pdf.
15. Knoll, Bodo, et al. "The global effects of R&D tax incentives: Evidence from micro-data". 2014, pp. 1-25, https://www.econstor.eu/bitstream/10419/100347/1/VfS_2014_pid_416.pdf.
16. Manoogian, Simone, and Gayane Shakhmuradyan. "Tax Incentives and Investment in ICTs: Evidence from the Central and Eastern Europe and Lessons for Armenia". 2020, pp. 1-72, https://msrf.aua.am/files/2020/04/MSRF-Final-Report_Gayane-Shakhmuradyan.pdf.
17. Mansfield, Edwin. "The R&D Tax Credit and Other Technology Policy Issues". *The American Economic Review*, vol. 76, No. 2, American Economic Association, 1986, pp. 190-194, <https://www.jstor.org/stable/1818762>.
18. Mitchell, Jessica, et al. "Tax incentives for R&D: supporting innovative scale-ups?". *Research Evaluation*, No. 29.2, 2020, pp. 121-134, <https://academic.oup.com/rev/article/29/2/121/5638885>.
19. Kalantaryan, Hayk. "R&D, Innovation and Tax Policy". *Enlight*, 15.09.2020, <https://enlightngo.org/language/en/post/22713?fbclid=IwAR0TIPuJmqPdHgESm3OFC9lxGz6XOPpQf487k-KiDxbBIafn3MAtBTKFnaQ>. Accessed: 24.03.2022.
20. "Organization for Economic Co-operation and Development (OECD)". *OECD R&D Tax Incentives Database, 2021 Edition*. 2021, <https://www.oecd.org/sti/rd-tax-stats-database.pdf>.
21. "R&D Tax Incentives database". *OECD. Stat*, <https://stats.oecd.org/Index.aspx?DataSetCode=RDTAX>. Accessed: 09.02.2022.
22. Tassej, Gregory. "Tax incentives for innovation: time to restructure the R&E tax credit". *The Journal of Technology Transfer*, No. 32.6, 2007, pp. 605-615, https://www.researchgate.net/profile/Gregory-Tassej/publication/5152877_Tax_incentives_for_innovation_Time_to_restructure_the_RE_tax_credit/links/5536b3650cf268fd00187464/Tax-incentives-for-innovation-Time-to-restructure-the-R-E-tax-credit.pdf.

WORKS CITED

1. Cornell University, INSEAD and WIPO. *The Global Innovation Index 2019: Creating Healthy Lives-The Future of Medical Innovation*. Ithaca, Fontainebleau, and Geneva, 2019, <https://www.globalinnovationindex.org/userfiles/file/reportpdf/gii-full-report-2019.pdf>.
2. HH Azgayin jhoghov. «*Teghekatvakan tekhnologianeri volorti petakan ajakcut'yan masin*» HH o'renq. 17 dekt. 2014, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=95017>. [National Assembly of the Republic of Armenia. RA Law on "State Support in Information Technology Sector". 17 December 2014]. (In Armenian)
3. HH bard'r tekhnologiakan ardyunaberut'yan naxararut'yun. «*TT volortum petakan ajakcut'yan masin*» HH o'renqov sahmanvat's artonut'yunic o'gtvogh kazmakerput'yunneri tsank (2015t'-2021t'), https://hti.am/main.php?lang=1&page_id=718. [Ministry of High-Tech Industry of the Republic of Armenia. "List of Companies Enjoying the Privilege Defined by the RA Law on State Support in the IT Sector (2015-2021)"] 2022. (In Armenian)
4. Evropakan hand'najhoghov. *Hatuk o'zhandakut'yun Hayastanin*. «*Nshad'zoghi bard'racum. gitut'yan nor ar'aqelut'yuny' Hayastani zargacman mej*». http://publications.europa.eu/resource/cellar/391373a3-35de-11eb-b27b-01aa75ed71a1.0002.01/DOC_1. [*Special Assistance to Armenia. "Raising the Bar. The New Mission of Science in the Development of Armenia"*] 2020. (In Armenian)
5. Baghana, Rufin, and Pierre Mohnen. "Effectiveness of R&D tax incentives in small and large enterprises in Quebec". *Small Business Economics*, No. 33.1, 2009, pp. 91-107, <https://link.springer.com/article/10.1007/s11187-009-9180-z>.
6. Bostanjan, Vardan, ev Armine Zaxaryan. «*Inovacion gorts'uneut'yan kht'anman himnakhndinery' Hayastani Hanrapetut'yunum*». *Banber HPTH*, No. 3, ej 71-91, <https://asue.am/upload/files/science/banber/2019-year-3/6.pdf>. ["Problems of Promoting Innovation Activity in the Republic of Armenia". *Messenger of ASUE*, No. 3, pp. 71-91] 2019. (In Armenian)
7. Bloom, Nick, et al. "Do R&D tax credits work? Evidence from a panel of countries 1979-1997". *Journal of Public Economics*, No. 85.1, 2002, pp. 1-31, <https://nbloom.people.stanford.edu/sites/g/files/sbiybj4746/f/rdtaxcredits.pdf>.
8. Cappelen, Adne, et al. "The effects of R&D tax credits on patenting and innovations". *Statistics Norway*, Research Department, 2008. 1-30, <https://www.econstor.eu/bitstream/10419/192547/1/dp565.pdf>.
9. Correa, Paulo, and Irem Gucer. "Tax incentives for research and development." *Innovation, Technology and Entrepreneurship Policy Note*, No. 4. World Bank, 2013. pp. 1-18, <https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/23659/91851.pdf?sequence=2&isAllowed=y>.
10. Czarnitzki, Dirk, et al. "Evaluating the impact of R&D tax credits on innovation: A microeconomic study on Canadian firms." 2004, pp. 1-23, <https://www.econstor.eu/bitstream/10419/24085/1/dp0477.pdf>.
11. d'Andria, Diego, and Ivan Savin. "Motivating innovation in a knowledge economy with tax incentives". *Jena Economic Research Papers*, No. 2015-004, Friedrich Schiller University Jena, 2015, pp. 1-34, <https://www.econstor.eu/bitstream/10419/108550/1/819017949.pdf>.
12. Dechezlepretre, Antoine, et al. "Do tax incentives for research increase firm innovation? An RD design for R&D". *National Bureau of Economic Research*, No. w22405, 2016, pp. 1-40, https://www.nber.org/system/files/working_papers/w22405/w22405.pdf.

13. Guinet, Jean, and Hiroko Kamata. "Do tax-incentives promote innovation?". *OECD Observer*, No. 202, 1996, pp. 22-26, https://www.oecd-ilibrary.org/economics/oecd-observer/volume-1996/issue-5_observer-v1996-5-en.
14. Huang, Chia-Hui, and Chih-Hai Yang. "Tax Incentives and R&D Activity: Firm-Level Evidence from Taiwan". 2009, pp. 1-40, https://gcoe.ier.hit-u.ac.jp/CAED/papers/id209_Huang_Yang.pdf.
15. Knoll, Bodo, et al. "The global effects of R&D tax incentives: Evidence from micro-data". 2014, pp. 1-25, https://www.econstor.eu/bitstream/10419/100347/1/VfS_2014_pid_416.pdf.
16. Manoogian, Simone, and Gayane Shakhmuradyan. "Tax Incentives and Investment in ICTs: Evidence from the Central and Eastern Europe and Lessons for Armenia". 2020, pp. 1-72, https://msrf.aua.am/files/2020/04/MSRF-Final-Report_Gayane-Shakhmuradyan.pdf.
17. Mansfield, Edwin. "The R&D Tax Credit and Other Technology Policy Issues". *The American Economic Review*, vol. 76, No. 2, American Economic Association, 1986, pp. 190-194, <https://www.jstor.org/stable/1818762>.
18. Mitchell, Jessica, et al. "Tax incentives for R&D: supporting innovative scale-ups?". *Research Evaluation*, No. 29.2, 2020, pp. 121-134, <https://academic.oup.com/rev/article/29/2/121/5638885>.
19. Kalantaryan, Hayk. "R&D, Innovation and Tax Policy". *Enlight*, 15.09.2020, <https://enlightngo.org/language/en/post/22713?fbclid=IwAROTIPuJmqPdHgESm3OFC9lxGz6XOPpQf487k-KiDxbBIAfn3MAAtBTKFnAQ>. Accessed: 24.03.2022.
20. "Organization for Economic Co-operation and Development (OECD)". *OECD R&D Tax Incentives Database, 2021 Edition*. 2021, <https://www.oecd.org/sti/rd-tax-stats-database.pdf>.
21. "R&D Tax Incentives database". *OECD. Stat*, <https://stats.oecd.org/Index.aspx?DataSetCode=RDTAX>. Accessed: 09.02.2022.
22. Tassej, Gregory. "Tax incentives for innovation: time to restructure the R&E tax credit". *The Journal of Technology Transfer*, No. 32.6, 2007, pp. 605-615, https://www.researchgate.net/profile/Gregory-Tassej/publication/5152877_Tax_incentives_for_innovation_Time_to_restructure_the_RE_tax_credit/links/5536b3650cf268fd00187464/Tax-incentives-for-innovation-Time-to-restructure-the-R-E-tax-credit.pdf.

INTERNATIONAL EXPERIENCE OF TAX PROMOTION OF INNOVATION ACTIVITIES AND THE OPPORTUNITIES FOR ITS LOCALIZATION IN THE REPUBLIC OF ARMENIA

ATOM MARGARYAN

*Armenian State University of Economics,
Innovation-Institutional Researches Laboratory, Head;
Ph.D. in Economics, Associate Professor,
Yerevan, the Republic of Armenia*

EMIL GRIGORYAN

*Armenian State University of Economics,
Innovation-Institutional Researches Laboratory, Researcher,
Yerevan, the Republic of Armenia*

Over the past decades, economists have repeatedly noted the positive effects of innovation. Tax policy is one of the state institutional levers to promote innovative

activities in the process of developing a national innovation system. The purpose of this article is to study the indicators characterizing research and development tax incentives and innovation in Armenia, EU countries, UK, in particular, the share of indirect tax incentives in GDP and innovation output sub-index, and the problem is to study the dynamics and trends of these indicators, as well as to study the institutional basis for innovation activity tax incentives in Armenia. In the article analysis, synthesis, comparison, graphic and description research methods are used. In the context of the task set at work, indicators of direct and indirect promotion of innovation activity in 2000 and 2019 and innovation output in 2019 are observed, on the basis of which some conclusions are drawn. The number of countries using the tax incentive toolkit has increased over the years. Another question is what structure the toolkit should have in order to ensure maximum efficiency. There is currently no internationally accepted mechanism for research and development tax incentives in Armenia. Nevertheless, the introduction of advanced tax policy experience in the field can greatly contribute to innovative activity in Armenia especially in the case of harmonious interaction with other components of the national innovation policy toolkit.

Keywords: *National innovation system, research and development, tax incentives, innovation output, government funding, high-tech sector, scientific and technical activity.*

МЕЖДУНАРОДНЫЙ ОПЫТ НАЛОГОВОГО ПРОДВИЖЕНИЯ ИННОВАЦИОННОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ И ВОЗМОЖНОСТИ ЕГО ЛОКАЛИЗАЦИИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

АТОМ МАРГАРЯН

*руководитель лаборатории Инновационных и институциональных
исследований Армянского государственного экономического
университета,
кандидат экономических наук, доцент,
г. Ереван, Республика Армения*

ЭМИЛЬ ГРИГОРЯН

*научный сотрудник лаборатории Инновационных и институциональных
исследований Армянского государственного экономического
университета,
г. Ереван, Республика Армения*

За последние десятилетия экономисты неоднократно отмечали положительные эффекты инноваций. Налоговая политика является одним из государственных институциональных рычагов стимулирования инновационной деятельности в процессе развития национальной инновационной системы. Целью данной статьи является изучение показателей, характеризующих налоговые стимулы НИОКР и инновации в Армении, странах ЕС, Великобритании, в частности, доли прямых и косвенных налоговых стимулов в ВВП и субиндекса инновационных результатов, задач – изучение динамики и тенденций этих показателей, а также изучение институциональных основ налогового стимулирования инновационной деятельности в Армении. В статье использованы анализные, синтезные, сравнительные, графические и описательные методы исследования. В контексте поставленной задачи рассматривались показатели прямых и косвенных стимулов

инновационной деятельности в 2000 и 2019 годах и инновационных результатов в 2019 году, на основании чего были сделаны некоторые выводы. Количество стран, использующих инструментарий налогового стимулирования, с годами увеличилось. Другой вопрос, какую структуру должен иметь инструментарий, чтобы обеспечить максимальную эффективность. В настоящее время в Армении отсутствует международно признанный механизм налогового стимулирования НИОКР. Тем не менее, внедрение передового опыта налоговой политики в данной сфере может в значительной степени способствовать инновационной деятельности в Армении особенно в случае гармоничного взаимодействия с другими составляющими инструментария национальной инновационной политики.

Ключевые слова: *национальная инновационная система, научно-исследовательские и опытно-конструкторские работы, налоговые продвижения, инновационные результаты, государственное финансирование, высокотехнологичный сектор, научно-техническая деятельность.*